

2299

Վ. ԶԱՊԻՏԱԱ ՅԵՎ Դ. ԳՈՐԼՈՎ



ԱՐՁՈՒԿ ՄՈՒԶԻԿԱ  
ՅԵՎ  
ՆՐԱ ԸՆԿԵՐՈՒԹՅԱ

ՊԵՏՈՒԹՅԱՆ

891.71.15

9-24

891.715  
9.24

Գ. ԶԱՐԴԵՆԱ ՅԵՎ Դ. ԳՈՐԼՈՎ

30 MAY 2011

# ԱՐՁՈՒԿ ՄՈՆՉԻԿ Ը ՅԵՎ ՆՐԱ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Նկարները Դ. ԳՈՐԼՈՎի



Ճ. Ճ. Ճ. Ճ.

16 JUL 2013

4540

ԽՈՂՈՔ ՅԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ




S9926-66



Գնացքն ընթանում է անտառի միջով։ Շոգեքարշի հետևից վազում են վազոնները։ Աղմկում են անիվները։ Քամուց որորվում են կեչիներն ու յեղևնիները։

Տատանվում են թփերը։ Նապաստակը դուրս պրծավ մարգագետինը։ Ականջներն են խլշկոտում։ Նպտել ու նայում են Հանկարծ շոգեքարշը սուլեց։ Նապաստակը վախեցավ և փախավ անտառ։

Տանրոցների վազոնում, արկղների, կապոցների և ճամբրուկների միջև դրված ե դռնակներով մի մեծ փայտե արկղ։



Յուրաքանչյուր կայարանում այդ արկղին մոտենում եր ուղեկցողը, բաց անում դռնակներն ու մեջն ափսեյով կաթ գնում։ Ո՞վ կար այդ արկղի մեջ։ Ում համար եր դրվում այդ կաթը։ Գուցե այնտեղ կատու կար իր ձագերով։ Ի՞նչ եք կարծում։ Այ, մի փոքր սպասեցեք, յերբ գնացքը կհասնի Մոսկվա—կիմանաք։



Գնացքը հասավ Մոսկվա։ Վազոնից արկղը հանեցին։ Դրին բեռնատար ավտոյի վրա և տարան կենդանաբանական այգին։ Բաց արին և այնտեղից դուրս վազեցին արջի յերկու քոթոթներ։

Քոթոթներից մեկը նիհար եր ու շար, նրան Մոնչիկ եյին կանչում։ Իսկ նրա հաստիկ ու բարի քրոջը՝ Դանդալոց։



Քոթոթներին բաց թողին այն հրապարակը, վորտեղ սպրում եյին աղվեսիկը, առյուծի ձագուկը, գայլուկներն և ուլիկը։ Մի անգամից այդքան անծանոթ գազաններ տեսնելով արջուկները վախից ծառը բարձրացան։ Նրանք ծառից ցած են նայում, իսկ հրապարակում գազանները վագում, խաղում ու գլխկոնձի յեն տալիս։ Արջուկների նախանձն ե գալիս, իրենք ել սիրում են խաղալ, բայց վախենում են իջնել։



Մոնշիկը սրտապնդվեց, ծառից իջավ ցած։ Իսկ առյուծիկը կարծես հենց նրան եր սպասում և ուզում եր թաթով խփել։ Մոնշիկը գետին ընկավ և վախից ականջները կծկեց։



Հետո մոտ վազեց ուլիկը, կանգնեց հետևի վոտների վրա՝ կարծես պատրաստվում եր պարելու։ Իսկ Մոնչիկը նստեց գետնին, բայց թե հետո ինչ աներ— ինքն ել չգիտեր։ Արդյոք նորից ծառը բարձրանալ, թե ուլիկի և մյուս գաղանների հետ խաղալ ու վազվացել։



Իսկ Լասկա շնիկի հետ Մոնչիկն անմիջապես բարեկամացավ։ Շնիկը նրա դնչիկը լիզեց, իսկ Մոնչիկը նրան գրկեց իր թաթերով։ Յեվ հետո նրանք ամբողջ որը միամին վազվացում ու խաղում եյին։



Ուրախ եք հրապարակում։ Մոնչիկը կասկայի հետեից  
եք վազում, կասկան աղվեսիկի, առյուծիկն ել թագնվում  
եք կոճղի հետեն ու պահմտոցիկ խաղում։

Իսկ Դանդալոշն և Ուլիկը տղնկողի եյին խաղում։  
Մեկ յերկու վեր, մեկ յերկու վայր, մեկ յերկու վեր,  
մեկ յերկու վայր։



Գագանները խաղից և շատ վազվելուց հազեցած՝ ուտել ցանկացան:

Գայլուկին, աղվեսիկներին և առյուծիկին հում միս տվին, իսկ Մոնչիկի առաջն ափսեյով կաթ դրին։ Աղվեսիկները իրար հետ կովում են, միսը բաժանել չեն կարողանում։ Մոնչիկը դունչը ափսեյի մեջ ե կոխել, վոչ վոքի վրա ուշադրություն չդարձնելով իր կաթն ե խմում։

Ճաշից հետո—մեռյալ ժամ եւ Բոլորը պառկեցին քնելու։ Առյուծիկը ձգվեց խոտերի վրա։ Աղվեսիկն ու գայլուկը գունդ ու կծիկ դարձան։ Անշարժ, իրար գրկած պառկեցին նաև Մոնչիկն ու Լասկան։ Այդպես միասին նըրանց համար լավ եր և տաք։



Մի անգամ առյուծիկը, աղվեսիկն ու խոզուկը խաղում եյին հրապարակում, Մոնչիկը թագուն մոտեցավ ջրի ծուրակին, բացեց այն և տակից թաթով բռնեց: Հենց վոր ջուրը ցանվեց առյուծիկի, աղվեսիկի ու խոզուկի վրա, նրանք իսկույն դեռ ու դեռ փախան, բայց վճնց փախան: Իսկ Մոնչիկը ինքնազործ կանգնած շարունակում է ջուր ցանել:



Մոնչիկը սիրում եր ծառ բարձրանալ: Բարձրանում եր ու ծառից ցած նայում: Մի անգամ ել նա բարձրացավ ծառի կատարը: Նրա տակի ձյուղը կոտրվեց: Մոնչիկը կախ ընկավ: Կախվել մոնչում ե, թաթերն է կծկում, ցած ընկնելոց վախենում.



Մեկ անգամ պահապանն իր ցախավելը մոռացել եր հրապարակում։ Գազանները վրա պրծան ցախավելին։ Քաշքացին ու քրքրեցին։ Յեկար ժամանակ նրանք ցախավելով զբաղվեցին, մինչև վոր բոլորովին կոտրատեցին։



Յեկավ ցուրտ, խոնավ և անձրեվային աշունը։ Հրապարակը փակվեց։ Առյուծի ձագուկներին, աղվեսիկներին և ուլիկներին տեղափոխեցին ուրիշ կենդանաբանական այգիներ։ Լասկա շնիկին մի քաղաքացի գնեց։ Իսկ Մոնչիկին փակեցին վանդակի մեջ։ Մոնչիկը տեսնելով, վոր իր բարեկամներին տանում են, ինքն ել ուզում ե պոկվել ու գնալ, բայց յերկաթե վանդակը չի թողնում։ Դե, այժմ, Մոնչիկ, նստի վանդակում։ Դու արդեն մեծ արջ ես դարձել։



Պատ. խմբագիր՝ Թ. Ղաղարյան  
Տելու խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Ստորագրիչ՝ Թ. Հովհաննեսյան

Անցավ աշունը, ձմեռն ել անցավ։ Յեկալ գարունը։  
Լասկա շնիկն իր նոր տիրոջ հետ յեկալ կենդանաբանական  
այգին։ Տեսնելով Մոնչիկին վանդակում նա վրա ընկավ,  
սկսեց փաղաքշել նրան և հաջել։

Մոնչիկը նույնպես ճանաչեց նրան, թաթերով գրկեց  
ու պոկ չեկավ։ Այդպես ել ստիպված յեղան Լասկային  
թողնել կենդանաբանական այգում։ Յեկ Մոնչիկն ու  
Լասկան շատ ուրախ ելին վր իրենք նորից պետք եւ միա-  
սին ապրեն։

ԽԵՍԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀՀՍՀ ԲԻBLIOTHEKA  
ՀԱՅՈ-ԱՐՄ ՀՀՊ

Քլավլիտի լիազոր Դ-3542 Հրատ. 4091.  
Պատվեր Յ. Տիրաժ 5000.  
Թուղթ 62×94 Տպագր. 2 մամ.  
Մեկ մամ. 17500 սիշ. Հեղինակ. 1/8 մամ.  
Հանձնված և արտադրության 2 հունվարի 1938 թ.  
Ստորագրված և տպագրության համար 9 մարտի 1938 թ.  
Գրնը 1 ո. 35 կոպ.

Գետերառի 1 տպարան, Յերևան, Լեսինի 65



ՀՀ Ազգային գրադարան  
NL0391386

ԳԻՒԸ 1 Ռ. 35 Կ.

294

4540

38-1  
38-1

2299

1 2299

В. ЧАПЛИНА и Д. ГОРЛОВ  
МЕДВЕЖОНОК РЫЧИК  
И ЕГО ТОВАРИЩИ  
ГИЗ АՐՄ. ССР, ЕРЕВАН

38-1  
2299